

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 3/9
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀԻՄԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԴԴ-ՀՄԱԱՇՁԲ-22/02»**

ք.Երևան

«04» 08 2022 թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ա. Հարությունյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բաղրամյանշին» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ.Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում գտնվող վարչական շենքի հիմանորոգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են 20.06.2022թ.-ից և կատարման ժամկետը սահմանվում է՝ նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված ժամկետը**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:



3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ալտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ալտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ալտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 154220600 (մեկ հարյուր հիսունչորս միլիոն երկու հարյուր քսան հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որից 25703433.33(քսանհինգ միլիոն յոթ հարյուր երեք հազար չորս հարյուր երեսուներեք դրամ, երեսուներեք լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով

ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի նախապերջին աշխատանքային օրը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը 20.06.2022թ-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագիր կնքվելը Կապալառու կողմից կատարված աշխատանքի դիմաց վճարումն իրականացվում է պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում (ՀՀ կառավարության 17.06.2022թ. թիվ 913-Ն որոշում):

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառու ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դատական դեպարտամենտ

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

Հ/Հ՝ 900011040723

ՀՎՀՀ՝ 02583241

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ա. Հարությունյան



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Բաղրամյանշին» ԲԲԸ

Հասցե՝ Իրավ. հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Լեռնագոգ, Գործ. հասցե՝ ՀՀ ք. Երևան, Կ.

Ուլնեցու 31/2

ՀՀ՝ 220300128091000

ՀՎՀՀ՝ 04600132

«Ակբա Բանկ» ԲԲԸ

Տնօրեն՝ Գ. Վարդանյան



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՅԱԾԻՎ*

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆԱԹԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 3/9 ՀԱՄԱՅՆՈՒԲ ՏՆԱԿՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐԴՄԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/հ	Աշխատանքների անվանումը	ՉԱ	Քանակ	Միավորի արժեքը /հազարամ/	Ընդհանուր արժեքը /հազարամ/
1	3	4	5	6	7
1. Կոնստրուկտորական մաս					
1./Թեքուղի-1					
1	Բետոնյա հարթեցուցիչ շերտի քանդում 15 մմ հաստությամբ	խմ	1,25	15,00	18,75
2	Գրունտի քանդում /3-րդ կարգ/ ձեռքով	խմ	3,7	3,00	11,10
3	Քանդած գրունտի, բետոնի տեղափոխում 30մ բարձելու համար	տն	8	1,00	8,00
4	Շին աղբի և գրունտի բարձում, տեղափոխում 15 կմ վրա	տն	8	5,00	40,00
5	Բնահողի տոփանում 20սմ հաստ., պնեվմոտոփանիչներով	խմ	1,65	25,00	41,25
6	Տեղի գրունտի ետլիցք ձեռքով և տոփանում	խմ	4,4	1,50	6,60
7	Միաձույլ ե/բ պատեր b=15սմ հաստ. B12,5 մակնիշի բետոնից	խմ	1,8	65,00	117,00
8	Ամրան Ա c -1 Φ=6մմ	տն	0,0028	570,00	1,60
9	Ամրան Ա500c Φ=10մմ	տն	0,096	550,00	52,80
10	Խճի նախապատրաստական շերտ հատակների տակ 10սմ	խմ	1,8	18,00	32,40
11	Հատակի նախապատրաստական շերտ B12,5 բետոնից	խմ	1,86	45,00	83,70
12	Բետոնյա նախաշերտի ամրամալորում մետ. գանցով	տն	0,0407	25,00	1,02
13	Ամրան Ա c -1 Φ=6մմ	տն	0,0017	570,00	0,97
14	Ամրան Ա -500c Φ=10մմ	տն	0,039	550,00	21,45
Ընդամենը					436,633
2./Թեքուղի-2/					
1	Բետոնյա հարթեցուցիչ շերտի քանդում 15 մմ հաստությամբ	խմ	1,25	15,00	18,75
2	Գրունտի քանդում /3-րդ կարգ/ ձեռքով	խմ	19,7	3,00	59,10
3	Քանդած գրունտի, բետոնի տեղափոխում 30մ բարձելու համար	տն	33,5	1,00	33,50
4	Շին աղբի և գրունտի բարձում, տեղափոխում 15 կմ վրա	տն	33,5	5,00	167,50
5	Բնահողի տոփանում 20սմ հաստ., պնեվմոտոփանիչներով	խմ	1,65	36,93	60,94
6	Տեղի գրունտի ետլիցք ձեռքով և տոփանում	խմ	12	1,50	18,00
7	Հիմքի հատակի նախաշերտ 100մմ հաստ., խճից	խմ	2,5	18,00	45,00
8	Միաձույլ ե/բ ժապավենային հիմքեր P<1մ B20 բետոնից	խմ	1,1	75,00	82,50
9	Ամրան Ա c -1 Φ=8մմ	տն	0,0390	570,00	22,23
10	Ամրան Ա -500c Φ=16մմ	տն	0,092	550,00	50,60
11	Միաձույլ ե/բ սալեր 150մմ հաստ. B12,5 մակնիշի բետոնից	խմ	0,5	50,00	25,00
12	Ամրան Ա c -1 Φ=6մմ	տն	0,0015	570,00	0,86
13	Ամրան Ա -500c Φ=10մմ	տն	0,035	550,00	19,25
14	Միաձույլ ե/բ պատեր b=15սմ հաստ. B12,5 մակնիշի բետոնից	խմ	3,1	65,00	201,50
15	Ամրան Ա c -1 Φ=6մմ	տն	0,0070	570,00	3,99
16	Ամրան Ա -500c Φ=10մմ	տն	0,295	550,00	162,25
17	Միաձույլ ե/բ աստիճաններ B12,5 մակնիշի բետոնից	խմ	0,7	65,00	45,50
18	Ամրան Ա c -1 Φ=6մմ	տն	0,0010	570,00	0,57
19	Ամրան Ա -500c Φ=10մմ	տն	0,033	550,00	18,15
Ընդամենը					1 035,187
3.Մետաղական աստիճան և հարթակ					
1	Գրունտի քանդում /3-րդ կարգ/ ձեռքով	խմ	0,6	3,00	1,80
2	Տեղի գրունտի ետլիցք ձեռքով և տոփանում	խմ	0,6	1,50	0,90
3	Միաձույլ ե/բ ժապավենային հիմքեր P<1մ B20 բետոնից	խմ	0,575	95,00	54,63
4	Ամրան Ա c -1 Φ=8մմ	տն	0,0063	570,00	3,59
5	Ամրան Ա -500c Φ=16մմ	տն	0,0083	550,00	4,57
6	Աստիճանների և հարթակների պատրաստում մետաղական տարրեր պրոֆիլներից և մոնտաժում տեղում	տն	0,464	1100,00	510,40
7	Մետաղական կոնստրուկցիաների ներկում հակակոռոզիոն ներկով	տն	0,464	80,00	37,12
Ընդամենը					613,001
5.Քաղցվածք P-2					
1	Քաղցվածքների բացում քարե պատերի մեջ	խմ	2,0	25,00	50,00
2	Անցքերի շաղափում քարե պատերում 40սմ խորությամբ	100հատ	0,84	55,00	46,20
3	Պատերի քաղցվածքների ուժեղացում պողպատյա պրոֆիլներով /շրջկապ/	տն	0,515	315,00	162,23
4	Անկյունակ 125*125*10մմ	գ/մ	25	17,00	425,00
5	Շերտապողպատ -50*520*6մմ	գ/մ	22,680	2,00	45,36
6	Հեղյուս	տն	0,046	1200,00	55,20
7	Մետաղական կոնստրուկցիաների ներկում հակակոռոզիոն ներկով	տն	0,515	80,00	41,20
Ընդամենը					825,185
6.Քաղցվածք P-3					
1	Քաղցվածքների բացում քարե պատերի մեջ	խմ	0,975	25,00	24,38

Հ/հ	Աշխատանքների անվանումը	ՉՄ	Քանակ	Միավորի աղծերը /հազդրամ/	Ընդհանուր աղծերը /հազդրամ/
1	3	4	6	6	7
2	Անցքերի շաղախում քարե պատերում 40սմ խորությամբ	100հատ	0,64	55,00	35,20
3	Պատերի բացվածքների ուժեղացում պողպատյա պրոֆիլներով /շրջակա/	տմ	0,515	315,00	162,23
4	Անկյունակ 125*125*10մմ	զ/մ	20	17,00	340,00
5	Շերտապողպատ -50*520*6մմ	զ/մ	17,280	2,00	34,56
6	Յեղյուս	տմ	0,032	1200,00	38,40
7	Մետաղե կոնստրուկցիաների ներկում հակակոռոզիոն ներկով	տմ	0,515	80,00	41,20
	Ընդամենը				675,960
	7 Միջնորմերի ուժեղացում				
1	Միջնորմերի ուժեղացում պողպատյա պրոֆիլներով	տմ	2,234	315,00	703,71
2	Անկյունակ 100*63*4մմ	զ/մ	10	8,50	85,00
3	Ամրան Ա -500с Φ=12մմ	տմ	1,961	550,00	1 078,55
4	Բլոկների անցքերի լցում B 10 մակնիշի բետոնով	խմ	26,3	50,00	1 315,00
5	Մետաղե կոնստրուկցիաների ներկում հակակոռոզիոն ներկով	տմ	0,273	80,00	21,84
	Ընդամենը				3 204,100
	8 Միջնորմերի ամրամակրում 100մմ հաստ				
1	100մմ միջնորմերի շարվածքի ամրամակրում պողպատյա պրոֆիլ	տմ	0,953	80,00	76,24
2	Անկյունակ 100*63*4մմ	զ/մ	42,0	8,50	357,00
3	Ամրան Ա с -1 Φ=6մմ	տմ	0,1230	570,00	70,11
4	Ամրան Ա -500с Φ=10մմ	տմ	0,355	550,00	195,25
5	Բլոկների անցքերի լցում B10 մակնիշի բետոնով	խմ	5,50	45,00	247,50
6	Մետաղե կոնստրուկցիաների ներկում հակակոռոզիոն ներկով	տմ	0,4780	80,09	38,28
	Ընդամենը				984,382
	9 Միջնորմերի ամրամակրում 200մմ հաստ				
1	200մմ միջնորմերի շարվածքի ամրամակրում պողպատով	տմ	0,509	80,00	40,72
2	Անկյունակ 100*63*4մմ	զ/մ	10	8,60	86,00
3	Ամրան Ա с -1 Φ=6մմ	տմ	0,0700	570,00	39,90
4	Ամրան Ա -500с Φ=10մմ	տմ	0,201	550,00	110,55
5	Բլոկների անցքերի լցում B 10 մակնիշի բետոնով	խմ	6,8	45,00	306,00
6	Մետաղե կոնստրուկցիաների ներկում հակակոռոզիոն ներկով	տմ	0,509	80,00	40,72
	Ընդամենը				623,888
	Ընդամենը՝ 1 /1-9/ մասեր				8 398,336
	2. Ճարտարապետական Մաս				
	1. Քանդման և ապամոնտաժման աշխատանքներ				
1	Փայտյա պատուհանների ապամոնտաժում	քմ	45,93	2,50	114,83
2	Փայտյա արտաքին դռների ապամոնտաժում	քմ	5,2	1,50	7,80
3	Փայտյա ներքին ՄՂՖ դռների ապամոնտաժում	քմ	98,55	1,50	147,83
4	Սանհանգույցների մ/պլաստ լուսամուտների ապամոնտաժում	քմ	14,4	5,50	79,20
5	Կերամոգրանիտե հատակների ծածկի քանդում	քմ	359,74	0,60	215,84
6	Կերամիկական հատակների ծածկի քանդում	քմ	143,3	0,60	85,98
7	Լինոլեումյան հատակի ծածկերի և շրիշակների քանդում	100մ ²	12,424	20,00	248,48
8	Հատակի մամրատախտակյա ծածկի և շրիշակների քանդում	քմ	61,5	0,75	46,25
9	Պեմզոսալերից 100մմ հաստ., միջնորմերի քանդում	100մ ²	3,18	100,00	318,00
10	Սանհանգույցների մ/պլաստե միջնորմերի ապամոնտաժում	քմ	32,4	5,50	178,20
11	Պեմզոբլոկներից միջնորմերի 20-30մմ քանդում	խմ	6,69	10,00	66,90
12	Խեցասալերի շրիշակների քանդում	քմ	11,23	0,80	8,98
13	Կերամոգրանիտե շրիշակների քանդում	քմ	8,45	0,80	6,76
14	Ցեմենտյա հարթեցուցիչ շերտի քանդում 40 մմ հաստությամբ	խմ	72,28	10,00	722,80
15	Ասֆալտաբետոնի ծածկույթի քանդում	խմ	2,55	5,50	14,03
16	Հին կաթսաների ապամոնտաժում	կ-տ	2	75,00	150,00
17	Հավաքովի աստիճանամարշի և հարթակի ապամոնտաժում	կ-տ	1	15,00	15,00
18	Շին աղբի բարձում եմ տեղափոխում 15 կմ վրա	տմ	185,6	5,00	928,00
	Ընդամենը				3 354,870
	2.Նորոգման աշխատանքներ՝ 1-ին հարկ				
1	Միջնորմերի շարվածք 400x200x100մմ պեմզաբլոկներից	քմ	190,8	6,50	1 240,20
2	Միջնորմերի շարվածք 20սմ հաստությամբ պեմզաբլոկներից գոյություն ունեցող շենքում	խմ	44,20	28,00	1 237,60
3	Ցեմենտյա հարթեցուցիչ շերտ 50մմ հաստությամբ	քմ	354,29	3,00	1 062,87
4	Ցեմենտյա հարթեցուցիչ շերտ 40մմ հաստությամբ	քմ	663,8	2,50	1 659,48
5	Հատակի ծածկ լամինատից 12մմ հաստ շրիշակների հետ միասին, սպունգով	քմ	627,19	10,00	6 271,90
6	Հատակի ծածկ մամրոգրանիտե սալիկներից 600x600մմ	քմ	390,9	12,00	4 690,80
7	Շրիշակների պատրաստում 10սմ կերամոգրանիտե սալիկից	քմ	24,49	15,00	367,35
8	Պատերի գաթե բարձրորակ սվաղ	քմ	446,92	3,00	1 340,76
9	Պատերի լավորակ ցեմենտյա սվաղ ներսի կողմից	քմ	54,63	2,50	136,58
10	Պատերի երեսապատում ելկոպական հախճաասլիկներով	քմ	54,63	14,00	764,82
11	Առաստաղի և պատերի հին ներկի մաքրում սվաղի հարթեցում 1,2 հարկ	100քմ	29,51	35,00	1 032,85
12	Կախովի առաստաղի կառուցում 12,5 խոնավակայուն գիպսակարտոնե սալերով մետաղական կարկասի վրա	քմ	36,6	7,50	274,50
13	Գոյորշամեկուսիչ մեկ շերտ թաղանթ չոր տեղադրմամբ	100քմ	3,258	75,00	244,35
14	Առաստաղի քերմոմեկուսացում 100մմ խաբամով	քմ	32,58	5,00	162,90
15	Առաստաղի բարձրորակ ներկում լատեքս ներկով	քմ	859	2,50	2 147,50
16	Պատերի բարձրորակ ներկում լատեքս ներկով	քմ	1392,2	2,50	3 480,50
17	Տախտակամածի տեղադրում ներքին հարդարման աշխատանքների համար	100քմ	10,67	100,00	1 067,00

Հ/հ	Աշխատանքների անվանումը	ՉԱ	Քանակ	Միավորի արժեքը /հազ.դրամ/	Ընդհանուր արժեքը /հազ.դրամ/
1	3	4	5	6	7
	Ընդամենը				27 181,950
	3. 2-րդ հարկ				
1	Միջնորմերի շարվածք 400x200x100մմ պեմզաբլոկներից	քմ	168,36	6,50	1 094,34
2	Ցեմենտյա հարթեցուցիչ շերտ 50մմ հաստությամբ	քմ	69,9	3,00	209,70
3	Ցեմենտյա հարթեցուցիչ շերտ 40մմ հաստությամբ	քմ	789,2	2,50	1 973,00
4	Հատակի հիդրոմեկուսիչ մեկ շերտ իզոգամից	քմ	69,9	2,00	139,80
5	Հատակի ծածկ մամուռաբլիտե սալիկներից 600x600մմ	քմ	175,0	12,00	2 100,00
6	Շրիշակների պատրաստում 10սմ կերամոզրամիտե սալիկից	քմ	18,75	15,00	281,25
7	Պատերի գաջե բարձրորակ սվաղ	քմ	217,4	3,00	652,20
8	Հատակի ծածկ լամինատից շրիշակների հետ միասին սպունգով	քմ	615,2	9,50	5 844,40
9	Առաստաղի բարձրորակ ներկում լատեքս ներկով	քմ	930	2,50	2 325,00
10	Պատերի բարձրորակ ներկում լատեքս ներկով	քմ	1400,5	2,50	3 501,25
	Ընդամենը				18 120,940
	4. 3-րդ հարկ				
1	Ցեմենտյա հարթեցուցիչ շերտ 40մմ հաստությամբ	քմ	351,9	2,50	879,70
2	Հատակի ծածկ լամինատից շրիշակների հետ միասին սպունգով	քմ	351,9	9,50	3 343,05
	Ընդամենը				4 222,750
	5. Դռներ և պատուհաններ			0,00	
